ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՌՆԻԿ ԹՈՒԽՏԱՐՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ Է «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՊԵՏ» ՈՍԿԵ ՄԵԴԱԼՈՎ

24.10.2017 11:26

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը երկարամյա աշխատանքի, մասնագիտական բացառիկ կարողությունների և փաստաբանական ինստիտուտում ներդրած ավանդի համար

«Փաստաբանության ասպետ» ոսկե մեդալով է պարգևատրել փաստաբան Գառնիկ Թուխտարյանին:

Պարգևատրման հանդիսավոր արարողությանը մասնակցել են Փաստաբանների պալատի խորհրդի անդամները, փաստաբանի ընտանիքի անդամները և փաստաբան գործընկերները:

Արա Ջոհրաբյանը, շնորհավորելով փաստաբան Գառնիկ Թուխտարյանին շեշտել է, որ Գառնիկ Թուխտարյանը փաստաբանի օրինակելի կերպար է իր զսպվածությամբ, համարձակությամբ, արհեստավարժությամբ և եզակի հռետոր է:

Փաստաբան Գառնիկ Թուխտարյանը նշել է, որ իր համար պարգևատրումը մեծ պատիվ և միևնույն ժամանակ պատասխանատվություն ներշնչող անակնալ է:

Հիշեցնենք, որ վերջին չորս տարվա ընթացքում «Փաստաբանության ասպետ» ոսկե մեդալով պարգևատրվել է միայն փաստաբան Ռուբեն Սահակյանը:





Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })